



Օգտակար տեղեկություններ դատարանին ներկայանալու համար



Մեր համար հասկանալի է որ դատարանին ներկայանալը հևարավոր է շփոթեցուցիչ եւ վախեւնալի լինել: Հոուսով եւք որ վերոյիշեալ հիշեցումները օգտակար կլինեն Ձեզ պատրաստվելու ձեր դատարանի օրվա համար:

- **Ճշտապահ եղէք** - Ձեր համար նշանակված դատական լսումից նւագագոյն 15 րոպէ առաջ դատարանում եղէք: Եթէ ժամանակին դատարանում ներկայ չլինէք, ձեր հայցը կարող է լուծվել առանց ձեր կարծիքը լսելու կամ ձեր դատական լսումը կարող է չեղյալ համարվել:
- **Կարգադրէք ձեր երեխայի խնամքը** - Երեխաների մուտքը արգելված է դատարանում: Բարի եղէք երեխային խնամքի հանձնելու համար կարգադրություն անել նախքան դատարանի ամսաթիվը:
- **Ձեր հետ բերէք փաստաթղթերը** - Ուշադրությամբ վերանայէք եւ լրացրէք բոլոր պետք եղած փաստաթղթերը նախքան դատարան հասնելը: Ձեր հետ ունեցէք ձեր եկամուտի հաստատագիրը եւ երեխայի խնամքի եւ բժշկական ապահովագրության համար կատարված ծախսերի փաստաթղթերը:
- **Հագնվէք պատշաճօրէն** - Այնպիսի հագուստ ընտրէք դատարան գնալուց որ կընտրէիք աշխատանք գտնելու ասուլիսին (job interview) մասնակցելու համար:
- **Հանգցրէք ձեր մոբայլ հեռախոսը** - Երբ դատարանում էք գտնվում հանգցրած պահէք ձեր մոբայլը եւ այլ էլեկտրոնիկ սարքերը:
- **Պատրաստ եղէք ամբողջ օրը այնտեղ անցկացնելու** - Երբեմն լսումների շատուրթյան պատճառով դատարանը բազմազբաղ է լինում: Պատրաստ եղէք ամբողջ օրը այնտեղ անցկացնելու համար:
- **Դատարանին հարգէք** - Դուք առիթ կունենաք խօսելու երեխաների ապրուստադրամի ապահովման կոմիսարի հետ: Այս այն առիթն է որ կարող էք բացատրել ձեր վիճակը: Ձեր կարծիքները մի ուղղէք ձեր դիմացինին (the other party) , կամ մի ընդհատէք որեւէ անձի որ դեռ խօսում է:

Շատ կարելւոր է որ ներկայ լինէք ձեր համար որոշված դատական լսման: Երեխայի ապրուստադրամի գործով զբաղվող փաստաբանները հայցին կապվող ծնողներից որեւէ մէկի ներկայացուցիչը չեն: Ոչ ոք բացի Ձեզից եւ ձեր փաստաբանից չի կարող դատարանում ձեր ներկայացուցիչը լինել:

Ամեն դատարան ունի իր Ընտանեկան Օրէնքների Պատասխանատուն՝ տեղեկություններ տալու երեխայի ապրուստադրամի մասին եւ անվճար օգնելու ծնողներին ստանալու եւ լրացնելու դատական ձեւերը: Կապի տեղեկությունները մատչելի են կայքէջի վրայ հետեւյալ հասցեով՝ www.courtinfo.ca.gov/selfhelp/lowcost/flf.htm

Ձեր դատական լսման մասին հավելյալ տեղեկության համար
Չանգահարէք՝ (866) 901-3212, կամ TTY՝ (866) 399-4096



“Երեխայի ապրուստադրամ... Ներդրում մեր երեխաների ապագայի համար”

CHILD SUPPORT DIRECTORS ASSOCIATION (ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՊՐՈՒՍՏԱԴՐԱՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ)

www.csda.org